# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ՍՈԼԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

### ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

11. 08. 2025թ.

2316 ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Սոլակ 2/41
Հեռախոս 093-86-24-70, էլ.փոստ solak@schools.am


<< Անուշ Գևորգյան >> Ա/ Ձ-ի

Տնօրեն Անուշ Գևորգյանին

**Հարգելի՛ տիկին Գևորգյան,**

ՀՀ Կոտայքի մարզի «Սոլակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի / այսուհետ՝ Պատվիրատու/ և << Անուշ Գևորգյան >> Ա/ Ձ-ի /այսուհետ Պայմանագրի կողմ/ 2025թ հունվարի 27-ին կնքվել է «ԿՄ-ՍՄԴ-ՄԱ-ԾՁԲ-25/02» ծածկագրով պայմանագիր /այսուհետ Պայմանագիր/ , համաձայն որի ՝ Պայմանագրի կողմը ստանձնել է պայքար կրծողների դեմ / դեռատիզացիայի/ ծառայություն մատուցում/այսուհետ՝ Ծառայություն/՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրի կողմը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված՝ Ծառայությունը Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Սակայն Պայմանագրի կողմը Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով սահմանված ժամկետները չեն պահպանվել,

այն մատուցվել է մինչև հունիս ամիսը ներառյալ, որից հետո սույն թվականի հուլիսի 31-ին ստացվել է գրություն << Անուշ Գևորգյան >> Ա/Ձ-ն լուծարվելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պայմանագրի կողմը էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ Ծառայության մատուցման ժամկետները խախտվել են :

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ **Պատվիրատուն սույն թվականի օգոստոսի 07 -ին միակողմանի լուծում է Պայմանագիրը**:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի պարտականություններ կատարող Ս. Ներսիսյան